

## ԿԱՐԾԻՔ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

**Հռիփսիմե Հովհաննեսի Հովսեփյանի «Ներքին աուդիտի խնդիրները ռիսկերի բացահայտման և կանխման գործում» թեմայով Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ**

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից պայմաններում կազմակերպությունների գործունեության արդյունավետ կառավարման միջոցով ֆինանսատնտեսական ցուցանիշների բարելավման, ինչպես նաև վերահսկողական համակարգում կարևորագույն դեր է հատկացվում ներքին աուդիտին: Երբեմն որոշ մասնագետների կողմից նրան վերագրվում են այնպիսի բնորոշիչներ, ինչպիսիք են հաշվառման, ստուգելու և պատժելու, քննադատելու գործառույթները: Սակայն, միջազգային ստանդարտներով, օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, մասնագիտական գրականության մեջ այն դիտվում է որպես ուսումնասիրությունների և վերլուծությունների միջոցով կառավարչական վերահսկողության մակարդակի բարձրացման, կատարողականի բարելավման, գործադիր ղեկավարությանը՝ խորհրդակցական նշանակության միջոց, իսկ նրա վերջնական գործառույթը միտված է կազմակերպության արժեքի բարձրացմանն ու պահպանմանը: Ներքին աուդիտի խնդիրները կազմակերպությունների կորպորատիվ կառավարման համատեքստում ուսումնասիրելը կարող է նպաստել վերահսկողական համակարգի բարելավմանը և կառավարչական որոշումների արդյունավետության բարձրացմանը: Ինչպես հանրային, այնպես էլ տնտեսության մասնավոր հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի ներդրման, գործունեության խնդիրների վերհանման, դրանց լուծման ուղիների քննարկումներն ու լուծումների առաջադրումը տեղ են գտել ինչպես օտարերկրյա, այնպես էլ հայազգի հետազոտողների աշխատություններում: Այնուամենայնիվ, ներքին աուդիտի իրավական բազայի փոփոխությունը և կորպորատիվ կառավարման համատեքստում դրա միջոցով

կազմակերպության կառավարման կատարելագործման խնդիրները դեռևս չեն ստացել իրենց խորքային լուծումները նրանց հետազոտություններում, ուստի դրանց հիմնովին ուսումնասիրելը և լուսաբանելը հրատապ խնդիր է:

Հ. Հովսեփյանի ատենախոսության մեջ դրված նպատակը, դրա լուծմանն ուղղված խնդիրները և այդ շրջանակներում իրականացված հետազոտություններն առնչվում են վերոնշյալ դիտարկումներին, որոնցով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ատենախոսության գլխավոր նպատակն է բացահայտել ներքին աուդիտի հիմնախնդիրներն իրեն ներհատուկ ռիսկերի կառավարման և կազմակերպությանը բնորոշ ռիսկերի բացահայտման ու կանխման գործում և ներկայացնել դրանց մեղմման, ինչպես նաև ներքին աուդիտի արդյունավետության բարձրացման ուղիները: Այդ նպատակն իրագործելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել ներքին աուդիտի փիլիսոփայությունը, հստակորեն տարանջատել այն հարակից մասնագիտություններից և ուղղություններից՝ առանձնացնելով գլխավոր տարբերակիչ գծերն ու առանձնահատկությունները,
- վերհանել մասնագիտության ընկալման խնդիրներն ու դրանց դրսևորումները՝ ներկայացնելով դրանք շտկելու հնարավոր ուղիները,
- ուսումնասիրել ներքին աուդիտի իրականացման գծով տեղական և միջազգային փորձը, կարգավորման տեղական և միջազգային օրենսդրաիրավական դաշտը, կատարել համադրություններ և համեմատություններ՝ հասկանալու և բացահայտելու համար առկա խնդիրների ծագման աղբյուրներն ու բարելավման հնարավոր ուղղությունները,
- տարանջատել ներքին աուդիտին ներհատուկ հիմնական ռիսկերը,

- ներկայացնել ռիսկերի կառավարման գործընթացներում ներքին աուդիտի հնարավոր դերերը և ռիսկերի բացահայտման ու կանխման գործում վերջինիս հիմնական խնդիրներն ու դրանց մեղմման հնարավոր ուղիները:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ**

Ատենախոսության գիտական նորույթն է հանդիսացել կազմակերպություններում կորպորատիվ կառավարման համատեքստում ներքին աուդիտի միջոցով բարելավման համակարգերի մշակումը: Մասնավորապես.

- «ՆԱԻ 3 գծեր» մոդելի վերլուծության և կիրառելիության գնահատման արդյունքում բացահայտվել են մոդելի հնարավոր բացերն ու առաջարկվել բարելավման ուղիներ,
- կազմակերպության ընդհանուր վերահսկողական համակարգում ներքին աուդիտի դերն ու խնդիրները հստակեցնելու նպատակով մշակվել և ներկայացվել է կազմակերպության վերահսկողական համակարգի պարզեցված մոդել,
- ներքին աուդիտի հաշվետվողականության համակարգի բարելավման, գործառույթների հստակեցման և արդյունավետության գնահատման համակարգի կատարելագործման նպատակով բացահայտվել են ՀՀ օրենսդրական խնդիրներն ու ներկայացվել լուծման ուղիները,
- ներքին աուդիտի գործառույթների արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել և ներկայացվել է ներքին ու արտաքին գնահատման ընդհանրական հայեցակարգ, ինչպես նաև աուդիտորական աշխատանքների պլանավորման գործընթացում ֆինանսական վերլուծությունների կիրառման մեթոդաբանություն:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

**Ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան,

տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության գիտական նորույթները, գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ **«Ներքին աուդիտի տեսամեթոդական հիմքերը»** գլխում ուսումնասիրվել և ներկայացվել են ներքին աուդիտի էությունը, ձևավորման անհրաժեշտությունն ու նախապայմանները, բացահայտվել է կորպորատիվ կառավարման համատեքստում ներքին աուդիտի արդյունավետ գործունեության անհրաժեշտությունը, տարանջատվել են այն գործառույթներն ու սկզբունքները, որոնց միջոցով ներքին աուդիտն առանձնանում է հարակից մասնագիտություններից: Այս գլխում անդրադարձ է կատարվել նաև կազմակերպության գործունեության ռիսկերի կառավարման շրջանակներում ներքին աուդիտի անհրաժեշտությանը, միաժամանակ հստակեցնելով գործնականում հենց ներքին աուդիտին բնորոշ հիմնական ռիսկերը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ներքին աուդիտի զարգացման միջազգային փորձը»** գլխում կատարվել է միջազգային պրակտիկայում ձևավորված ներքին աուդիտի համակարգի համընդհանուր գնահատում: Մասնավորապես, հեղինակի կողմից ուսումնասիրվել է տարբեր երկրներում ներքին աուդիտի ոլորտը կարգավորող իրավական բազան, զուգահեռներ են անցկացվել ըստ առանձին տարածաշրջանների առանձնահատկություններին, ներկայացվել են ոլորտի կարգավորման համընդհանուր ստանդարտների մոտեցումները: Այս գլխում ուսումնասիրվել են նաև միջազգային մակարդակով ներքին աուդիտին առնչվող և սպասվող մարտահրավերները՝ թվայնացման և ավտոմատացման, ճգնաժամերին դիմակայելու համատեքստում: Համեմատական կերպով վերլուծվել են տարբեր երկրներին և տարածաշրջաններին բնորոշ այն ռիսկերը, որոնք հնարավոր է կանխել կամ մեղմել ներքին աուդիտի համակարգի արդյունավետ ներդրման հաշվին: Ռիսկերի գնահատման շրջանակներում տարանջատվել են հանրային և ոչ հանրային հատվածներում դրանց կառավարման միտումները, որով տարբեր տարածաշրջաններում ի հայտ են եկել որոշակի տարբերակումներ՝ դրանք ներկայացնելով հարցում կատարվածների համապատասխան հաշվարկներով:

Ատենախոսության երրորդ՝ **«Ներքին աուդիտի արդի վիճակը և հիմնական խնդիրները ՀՀ-ում»** գլխում ուսումնասիրվել է ՀՀ-ում ներքին աուդիտի ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական բազան, դրանք համեմատվել են աշխարհում գոյություն ունեցող նույնատիպ իրավական ակտերի հետ, նաև համադրելով ՀՀ-ում գործնական կիրարկման հնարավորությունների և իրատեսական լինելու հետ՝ տարանջատվել են այն բացերը, որոնք խոչընդոտում են ներքին աուդիտի առավել արդյունավետ գործունեությանը: Հեղինակի կողմից ներկայացվել են նաև կազմակերպություններում ֆինանսական վերլուծությունների միջոցով ներքին աուդիտի գործառույթների առավել արդյունավետ զարգացման հնարավորությունները, և ամփոփելով ՀՀ-ում ներքին աուդիտի ոլորտի հարցումների արդյունքների ուսումնասիրությունները՝ կատարվել է կորպորատիվ կառավարման մեջ դրա դերի և կարևորության ընդգծում:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ընդհանրացվել և ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները:

Աշխատանքում հեղինակի կողմից օգտագործվել են հայրենական և արտասահմանյան գիտական աղբյուրներ, ուսումնասիրվել և օգտագործվել են հետազոտության ոլորտին առնչվող վիճակագրական տվյալներ, առանձին կազմակերպությունների հաշվետվությունների տվյալներ, համացանցային տեղեկատվական աղբյուրներ, հարցումներից ստացված նյութեր:

Հատկապես արժեքավոր է ՀՀ կազմակերպություններում ներքին աուդիտի արդյունավետության բարձրացման նպատակով ֆինանսական ցուցանիշների վերլուծության միջոցով լրացուցիչ տեղեկատվության ստացման ընդգծումը և կառավարման մեջ դրա արդյունքների ներդրման մոդելի մշակումը:

Հետազոտության արդյունքում մշակված առաջարկություններն ունեն գործնական կիրառման հնարավորություններ ՀՀ հանրային և ոչ հանրային ոլորտներում կորպորատիվ կառավարման մեջ ներքին աուդիտի առավել արդյունավետ գործիքների կիրառման համար:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այնուհանդերձ, աշխատանքը զերծ չի նաև որոշ թերություններից և բացթողումներից.

1. Ատենախոսության մեջ որպես գիտական նորույթ (3-րդ գիտական նորույթ) ներկայացվել է ՀՀ օրենսդրական խնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների ներկայացումը՝ ներքին աուդիտի համակարգի կատարելագործման համատեքստում: Մեր կարծիքով, օրենսդրական բացթողումների բացահայտումը և դրանց փոփոխությունների առաջարկությունները ցանկացած ոլորտում կրում են պարբերական բնույթ, հետևաբար գտնում ենք, որ դա կարելի է ներկայացնել առաջարկությունների տեսքով, այլ ոչ որպես գիտական նորույթի: Նպատակահարմար կլիներ նշված գիտական նորույթի բովանդակությունը ներկայացվել խմբագրված տարբերակով:
2. Ատենախոսության 4-րդ գիտական նորույթի 2-րդ մասում ամփոփված է, որ մշակվել և ներկայացվել է նաև աուդիտորական աշխատանքների պլանավորման գործընթացում ֆինանսական վերլուծությունների կիրառման մեթոդաբանություն: Քանի որ նորույթում նշված մեթոդաբանությունն արդեն իսկ գոյություն ունի և գիտական նորույթ չէ, այլ հեղինակի կողմից առաջարկվում է այն կիրառել ներքին աուդիտի գործառույթներում, ցանկալի կլիներ նշված գիտական նորույթը ներկայացվել խմբագրված տարբերակով:
3. Աշխատանքի 2-րդ գլխում ներքին աուդիտի միջազգային փորձին անդրադառնալիս և մեկնաբանելիս հեղինակը հիմնականում ներկայացրել է արդեն իսկ այլ հեղինակների կողմից կատարված ուսումնասիրությունները. բացակայում են սեփական ուսումնասիրությունները՝ տալով միայն գնահատականներ: Աշխատանքը կշահեր, եթե այս գլխում վերլուծվեր միջազգային փորձի շրջանակներում ըստ առանձին ոլորտների՝ հանրային և ոչ հանրային կազմակերպությունների առանձին ֆինանսատնտեսական ցուցանիշների վրա ներքին աուդիտի թողած հետևանքների ազդեցությունը, հետևաբար՝

կորպորատիվ կառավարման վրա ազդեցության չափելի գնահատականները:

4. Ատենախոսության 3.4 «Ռիսկերի բացահայտման և կանխման հետ կապված ներքին աուդիտի հիմնական խնդիրները ՀՀ-ում և դրանց լուծման հնարավոր ուղիները» ենթագլխում հեղինակի կողմից ներկայացվում են միայն հարցմանը պատասխանած կազմակերպությունների տվյալների հիման վրա եզրահանգումներ, սակայն աշխատանքում հիմնավորված չեն՝ որքանով են այդ հարցումները ներկայացնում ամբողջական պատկեր և ինչպես են ազդում գնահատականների վրա: Միաժամանակ, գնահատված չէ հարցումների պատասխանների խիստ սուբյեկտիվ և իրական պատկերից հնարավոր շեղման հավանականության հետ կապված ռիսկը:
5. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի որոշ թերություններ:

Սակայն նշված դիտողությունները էապես չեն ազդում ատենախոսության գիտական մակարդակի և գործնական նշանակության ընդհանուր գնահատականի վրա:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով, կարելի է հավաստել, որ ատենախոս Հ.Հ. Հովսեփյանի կողմից կատարվել է արդիական, ծավալուն, տեսամեթոդական և կիրառական բնույթի հետազոտություն: Ընդհանուր առմամբ այն կարելի է որակել որպես պատշաճ մակարդակով կատարված ինքնուրույն ավարտուն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ռիսկերի բացահայտման և կանխման գործում ներքին աուդիտի տեսական և գործնական կարևոր խնդիրներ և ձևավորվել են գիտական նորովի արդյունքներ:

Սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան, համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Հեղինակի կողմից հրատարակված գիտական աշխատությունները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Հ. Հ. Հովսեփյանի «Ներքին աուդիտի խնդիրները ռիսկերի բացահայտման և կանխման գործում» թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Հռիփսիմե Հովհաննեսի Հովսեփյանն, արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**Պաշտոնական ընդդիմախոս՝**

**տնտեսագիտության թեկնածու,**

**«Ստրատեգիուս» ՍՊԸ ֆինանսական տնօրեն՝**

 **Ս. Ռ. Միրզոյան**

**Տնտեսագիտության թեկնածու**

**Ս. Ռ. Միրզոյանի ստորագրությունը**

**հավաստում եմ**

**«Ստրատեգիուս» ՍՊԸ տնօրեն՝**



**Ա. Ա. Գաբրիելյան**

09.12.2022թ.